ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵ
Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

ք. Երևան «26» 07 2022թ.

Հ Ր Ա Մ Ա Ն N 302-Լ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՄԻ ՇԱՐՔ ՀՐԱՄԱՆՆԵՐ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 2022 թվականի հունիսի 17-ի N 872-N, 2022 թվականի հունիսի 17-ի N 877-Ն, 2022 թվականի հուլիսի 7-ի N 1044-Ն որոշումների պահանջներով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի՝ 2012 թվականի մարտի 5-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում անշարժ գույքի գնահատման գործունեության մասնագիտական հանձնաժողովի անհատական կազմը և կանոնադրությունը հաստատելու մասին» N 54-Լ, 2012 թվականի ապրիլի 18-ի «Անշարժ գույքի գնահատման մասնագիտական որակավորման հանձնաժողովի անհատական կազմը և կանոնադրությունը հաստատելու մասին» N 106-Լ, 2012 թվականի նոյեմբերի 1-ի «Անշարժ գույքի գնահատման հաշվետվությունների մասնագիտական ուսումնասիրությունների իրականացման կարգը հաստատելու մասին» N 312-Լ հրամանները:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում այն Կադաստրի կոմիտեի cadastre.am պաշտոնական կայքում «Իրավական ակտեր» բաժնի «Կոմիտեի ղեկավարի հրամաններ» ենթաբաժնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Recoverable Signature

X

ՍՈՒՐԵՆ ԹՈՎՄԱՍՅԱՆ

Սուրեն Թովմասյան Signed by: TOVMASYAN SUREN 1201860393

Կադաստրի կոմիտե
Երևան 0023, Արշակունյաց պողոտա 7, հեռ.՝ (+ 374 60) 47-41-10, էլ. փոստ՝ info@cadastre.am, կայք՝ www.cadastre.am